

Sona Haroutyunian, *Hayoc' c'elaspanowt'yan t'eman italakan grakanowt'yan mej* [The Theme of the Armenian Genocide in the Italian Literature], Yerevan, Yerevan State University Press, 2015, 128 pages.

Recently Sona Haroutyunian's (PH.D, Prof. of Ca' Foscari University of Venice) remarkable study "The Theme of the Armenian Genocide in the Italian Literature" (2015) was published in Yerevan.

The book cover speaks for itself not only by its color setting and the map of Italy, courageously having sheltered Western Armenians, deprived of their motherland as an aftermath of the Genocide but also the lovely picture of the library of the highly merited Mekhitarist Congregation of Venice, symbolizing the ancient Armenian culture.

The present research has been carried out in the framework of the program "Basic and Critical Applied Researches in Scientific and Scientific-Technical Activities" under the auspices of the Ministry of Diaspora. The book was published by the recommendation of the YSU Scientific Council.

The foreword to the book was written by Prof. Emeritus of Political Science at Royal Military College of Canada Alan Whitehorn, the author of several notable and unique studies on the Armenian Genocide, also the indispensable and worthy encyclopedia "The Armenian Genocide; The Essential Reference Guide" (Santa Barbara, the United States, 2015).

The author, Sona Haroutyunian, has dedicated the book to the memory of her ancestors from Sassoon and Van as well as all martyrs of the Great Massacre.

At the beginning of her research the author expresses her concern: "Today, a century after the Genocide, unfortunately we have neither memoirs, published in different states nor a comprehensive miscellanea of studies, summarizing the fiction literature about the Armenian Genocide", thus pointing out her goal: "this research may be a model sample to study the literature on the Armenian Genocide in other countries, serving as a necessary tool for further comparative studies, the result of which will enable us to achieve a more complete picture of post- Genocide Diaspora" (p. 19).

Therefore, in the first chapter of the research, the author one by one addresses about two dozen memoirs on the Armenian Genocide, published in Italy. She has translated the citations from Italian into Western Armenian: "...for making speech natural and by means of vocalizing the language of the generation of the Great Massacre, to once again pay tribute to the martyrs" (p. 19).

The author mentions also memoirs and fiction literature, released in other countries but translated and published in Italy, giving a general idea of all this.

In the second chapter of the research Sona Haroutyunian thoroughly addresses the fiction on the Armenian Genocide and particularly stresses the role and importance of the testimonies and memoirs of eyewitness survivors: “Our recent research results make clear that historical reality does not always find a written expression right after the tragic event. Before being recorded, it is reproduced, “interpreted” in survivors’ minds, becoming a memory. Afterwards, often decades later, the eyewitness finds strength to overcome the psychological obstacles and put in writing his memories. Anyway, in some cases, he is limited by oral testimony, thus converting memory into a story which may be: a) recorded by scientists and become a subject matter for research; b) serve a basis for the survivor’s descendants to write memoirs; c) eventually be reflected in fiction literature.” (p. 55).

According to the author, in the case of the Arslans three generations were needed to digest the historical tragedy: “First, through her relatives Antonia Arslan learned about family stories, interrupted or lost in time and space. In Arslan’s efforts of filling the gaps of the past, among survivors’ testimonies, memoirs, documents, etc., photographs also played a great role.... These visual fractures “become” part of the family story and are used by the author to reconstruct her life” (p. 76, 78).

Sona Haroutyunian highly appreciates prominent Italian-Armenian writer Antonia Arslan’s literary heritage, notably her novels on the Armenian genocide: “The Road to Smyrnia”, “Rustle of Wooden Pearls”, “The Book of Moush” and of course her novel “The Lark Farm” which was translated into many languages. The Armenian translation was made by S. Haroutyunian who not only translated it with love and devotion but analyzed the whole complicated creative process: “In A. Arslan’s novel we witness one of the thousands of family tragedies. We also see how a literary genre turns into a powerful means to draw foreign reader’s attention to historical reality; in this particular case to the Armenian Genocide” (p. 74). In her novels Arslan restores the family stories, combining historical research and fantasy”.(p. 74).

Certainly, during the process of translation S. Haroutyunian has also overcome many difficulties of which she does not speak out, for “...any translation like an authored book has its creation history” (p. 80).

Since Prof. Haroutyunian was interested in foreign language translators' opinions, she turned to many with questions. Noteworthy are the words of Hungarian translator Kinga Júlia Király: "[...] Antonia Arslan's "The Lark Farm" is the most shocking translation I have ever made. ...Readers have confessed that after having read the book they understand what was the Armenian Genocide. They knew about the Holocaust but not the Great Massacre. Anyway, the young generation has no idea about it. One of my friends' mother was irritated and burst into tears, saying: "Why people in Hungary are not aware of all this, why this historical fact is not highlighted in schools at the lesson of history?" (p. 81). This means that Arslan's novel has a shocking impact everywhere, raising awareness of the Armenian Genocide.

S. Haroutyunian has addressed also the screening of this novel, which was masterly done by talented brothers Paolo and Vittorio Taviani.

S. Haroutyunian, having lectured in different countries, continued her scientific research of analytical nature and applied methodological novelties. The Ca' Foscari University activities of 2015 started on 7 January with S. Haroutyunian's public lecture on the Armenian Genocide. Apart from professors, students of the university and representatives of the Armenian community, the lecture was attended by the Dean of Communication Studies Department of Bridgewater State University (Massachusetts, the United States) with his 30 American students. Prior to their presence at the university, he had commissioned his students to read Arslan's book and watch the film. Though contradictory opinions were shared during the discussion, "nonetheless, almost all students admitted that the film made them familiar with a historical event which was completely or almost unknown to them" (p. 89). And this was the most important thing.


Summarizing the above it should be mentioned that the range of Prof. Sona Haroutyunian's ideas and work style is wide, and her study "The Theme of the Armenian Genocide in the Italian Literature" is an important scientific contribution in the field of memoirs and literature, published on the Armenian Genocide in Italy as well as in Diaspora.

Dr. Prof. Verzhine Svazlian

Institute of Archaeology and Ethnography
National Academy of Sciences, Armenia

ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ, *Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 128 էջ:*

Վենետիկի Կա'Ֆոսկարի (Ca'Foscari) համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Սոնա Հարությունյանի «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ» ուշագրավ հետազոտությունը կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում՝ ՀՀ սփյուռքի նախարարության հովանավորությամբ: Այն հրատարակվել է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ: Հեղինակը գիրքը նվիրել է իր սասունցի և վանեցի նախնիների ու Մեծ եղեռնի բոլոր նահատակների հիշատակին:



Գրքի կազմն ինքնին խոսուն է ոչ միայն իր գունային լուծումով, այլև ցեղասպանության հետևանքով հայրենագրկված արևմտահայերին ասպետաբար հյուրընկալած Բուսալիայի քարտեզով, նաև հնագույն հայ մշակույթը խորհրդանշող Վենետիկի վաստակագար Միսիթարյան միաբանության գրադարանի գողտրիկ նկարով:

Առաջաբանը գրել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք ուշագրավ և ինքնատիպ աշխատությունների, ինչպես նաև Հայոց ցեղասպանությանը նվիրված խիստ անհրաժեշտ և արժեքավոր “The Armenian Genocide: The Essential Reference Guide” (Մանտա Բարբարա, ԱՄՆ, 2015) հանրագիտարանի հեղինակ, Կանադայի թագավորական ռազմական համալսարանի քաղաքագիտության պատվավոր պրոֆեսոր Ալան Ուայթհորնը:

Հետազոտության սկզբում Ս. Հարությունյանը մտահոգություն է հայտնում, որ «այսօր՝ եղեռնից մեկ դար անց, ցավոք, դեռևս չունենք առանձին պետություններում հուշագրություններ, ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանության մասին գեղարվեստական գրականությունն ամփոփող աշխատությունների ամբողջական պատկերը, – և ուղենշում է իր

նպատակը, – այս հետազոտությունը կարող է տիպային օրինակ համարվել ուսումնասիրելու մյուս երկրների Հայոց ցեղասպանության գրականության պատկերը՝ դառնալով անհրաժեշտ գործիք հետագա համեմատական աշխատանքի համար, որի արդյունքում հնարավորություն կունենանք ստանալու հետցեղասպանական Սփյուռքի առավել լիարժեք պատկերը» (էջ 19):

Ուստի հետազոտության առաջին գլխում հեղինակը մեկ առ մեկ անդրադառնում է Իտալիայում Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակված շուրջ երկու տասնյակ հուշագրություններին, որոնց մեջբերումները իտալերենից ինքը թարգմանել է արևմտահայերեն՝ «թե՛ խոսքին բնականություն հաղորդելու և թե՛ Մեծ եղեռնի սերնդի լեզուն վերապրեցնելու միջոցով ևս մեկ անգամ վերապրյալներին ու նահատակներին հարգանքի տուրք մատուցելու նպատակով» (էջ 19): Ս. Հարությունյանը հիշատակում է նաև այլ երկրներում լույս տեսած, բայց Իտալիայում թարգմանված ու հրատարակված հուշագրությունները և գեղարվեստական երկերը՝ ընդհանուր պատկերացում տալով այդ բոլորի մասին:

Աշխատության երկրորդ գլխում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ առկա գեղարվեստական գրականությունը և առանձնապես շեշտում ականատես վերապրողների հաղորդած վկայությունների և հուշագրությունների դերն ու նշանակությունը. «Վերջին տարիներին մեր ուսումնասիրությունների արդյունքում հայտնի դարձավ, որ պատմական իրադարձությունը միշտ չէ, որ գրավոր արտահայտություն է գտնում ողբերգական եղելությունից անմիջապես հետո: Նախքան գրառվելը այն վերարտադրվում, «թարգմանվում է» վերապրյալների մտքում՝ դառնալով հիշողություն: Այնուհետև հաճախ միայն տասնամյակներ անց, ականատեսն ուժ է գտնում հաղթահարելու հոգեբանական արգելքները և թղթին հանձնելու հուշերը: Որոշ դեպքերում, սակայն, սահմանափակվում է բանավոր վկայություն տալով՝ այդ կերպ հիշողությունը վերածելով բանավոր պատմության. ա) որը կարող է գրի առնվել գիտնականների կողմից և դառնալ ուսումնասիրության նյութ, բ) որի վրա կարող է հենվել վերապրյալի սերունդը և հուշագրություն գրել, գ) որը, ի վերջո, կարող է գտնել իր արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ» (էջ 55):

Ըստ Ս. Հարությունյանի, Արսլանների պարագայում պահանջվել է երեք սերունդ, որպեսզի յուրացվեր պատմական ողբերգությունը.

«Նախ՝ Անտոնիա Արսլանն ազգականների միջոցով հաղորդակից է եղել ժամանակի և տարածության մեջ ընդհատված կամ անհետացած ընտանեկան պատմություններին: Անցյալի բացերը լրացնելու ջանքերում Արսլանի համար վերապրյալների վկայությունների, հուշագրությունների, փաստաթղթերի և այլ նյութերի կողքին մեծ դեր են խաղացել նաև լուսանկարները... Այդ տեսողական պատառիկները «դառնում են» ընտանեկան պատմության մի մասը և օգտագործվում հեղինակի կողմից՝ վերականգնելու իր կյանքի պատումը» (էջ 76, 78):

Գրքի հեղինակը շատ բարձր է գնահատում իտալահայ հայտնի գրող Անտոնիա Արսլանի ստեղծագործական անցած ուղին, հատկապես ցեղասպանությանը նվիրված նրա «Զևյուռնիայի ճանապարհը», «Փայտյա մարգարիտների շրջունը», «Մշո գիրքը» և, ի վերջո, նրա «Արտույտների ազարակ» վեպը, որը թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով: Հայերեն թարգմանությունն իրականացրել է Ս. Հարությունյանը, որը ոչ միայն սիրով ու խանդաղատանքով է այն հայացրել, այլև հանգամանորեն վերլուծել է այդ ամբողջ ստեղծագործական դժվարին գործընթացը. «Ա. Արսլանի վեպերում ականատես ենք լինում ընտանեկան հազարավոր ողբերգություններից մեկին: Տեսնում ենք նաև, թե ինչպես է գրական ժանրը դառնում հզոր միջոց՝ հրավիրելու օտարազգի ընթերցողի ուշադրությունը պատմական եղելության՝ այս պարագայում Հայոց ցեղասպանության վրա: Վեպերում Արսլանը վերականգնում է ընտանիքի պատմությունը՝ միավորելով պատմական հետազոտությունը և երևակայությունը, «հյուսելով ճշմարտության և ճշմարտանմանի ուստայնը» (էջ 74):

Անշուշտ, Ս. Հարությունյանն իր թարգմանության ընթացքում ևս - հաղթահարել է բազմաթիվ դժվարություններ, սակայն այդ մասին նա լռում է, քանի որ «յուրաքանչյուր թարգմանություն հեղինակած գրքի նման ունի իր ստեղծման պատմությունը» (էջ 80): Այնինչ գրականագետ-թարգմանչին հետաքրքրել է նաև «Արտույտների ազարակը» վեպի այլալեզու թարգմանիչների կարծիքները գրքի մասին, ուստի և շատերին է դիմել հարցադրումներով: Ուշագրավ է հունգարերենի թարգմանիչ Քինգա Ջուլյա Քիրալիի խոսքը. «...Անտոնիա Արսլանի «Արտույտների ազարակը» վեպը երբևէ կատարած իմ ամենացնցող թարգմանությունն է: ...Ընթերցողները խոստովանեցին, որ գիրքը կարդալուց հետո, առաջին անգամ հասկացան, թե ի՞նչ է Հայոց ցեղասպանությունը: Նրանք գիտեին Հոլոքոստի մասին, բայց ոչ՝ Մեծ եղեռնի: Համենայն դեպս, երիտասարդ սերունդը դրա մասին գաղափար չունի:

Ընկերներիցս մեկի մայրը զայրացավ ու արտասվեց՝ ասելով. «Բնչո՞ւ մարդիկ Հունգարիայում տեղեկացված չեն այս ամենի մասին, ինչո՞ւ այս պատմական եղելությունը չի լուսարանվում դպրոցներում՝ պատմության դասերին» (էջ 81): Այնպես որ Ս. Արսլանի վեպն ամենուրեք ցնցող տպավորություն է գործել՝ իրազեկելով Հայոց ցեղասպանության թեմայի մասին:

Գրքում Ս. Հարությունյանն անդրադարձել է նաև այդ վեպի կինոէկրանավորմանը, որը վարպետորեն իրականացրել են Պատլո և Վիտտորիո Տավիանի տաղանդավոր եղբայրները: Տարբեր երկրներում զեկուցումներով հանդես եկած գրականագետը, շարունակելով իր վերլուծական բնույթի գիտական հետազոտությունը, կիրառել է նաև մեթոդական նորամուծություններ: Վենետիկի Կա՛Ֆուկարի համալսարանի 2015 թ. միջոցառումները մեկնարկել են հունվարի 7-ին՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված Ս. Հարությունյանի հանրային դասախոսությամբ, որին համալսարանի ուսանողներից, դասախոսներից ու հայ համայնքի ներկայացուցիչներից բացի, ներկա են եղել նաև ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Բրիջվորթրի պետական համալսարանի Հաղորդակցության ֆակուլտետի դեկանն իր 30 ամերիկացի ուսանողների հետ: Մինչ այդ նա զեկուցել էր նշյալ համալսարանում, նախօրոք բոլոր ուսանողներին նախապատրաստել և հանձնարարել էր ընթերցել գիրքն ու դիտել կինոժապավենը: Թեպետ քննարկման ընթացքում արտահայտվել են հակասական կարծիքներ, սակայն, ինչպես հեղինակն է նշում, «ուսանողները գրեթե միահամուռ ընդունել են, որ ֆիլմի միջոցով ծանոթացան պատմական մի եղելության, որից ոչինչ կամ գրեթե ոչինչ չգիտեին» (էջ 89): Իսկ դա ամենից կարևորն էր:

Ամփոփելով՝ նշենք. Ս. Հարությունյանի մտահղացումների ու գործելաճի պարագիծը լայնահուն է, և նրա «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ» հետազոտությունը կարևոր ու արժեքավոր ներդրում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրատարակված հուշագրությունների և գրականության բնագավառում ինչպես Իտալիայի, այնպես և հայ սփյուռքի մասշտաբով:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ